

ւարչտին տներ եւ գետնափոր, սակայն չեն
 55 անդորր, այլ գան իջնուն, զրզղեն եւ տառա-
 պեցուցանեն. թող զայն որ իֆղիրայ, չլթախ,
 զրկանք, յափշտակութիւն եւ անիրաւութիւն
 անցին ի գլուխս նոցա: Եւ ո՞վ կարէ լաւ տուն
 շինել, կամ ձի եւ ջորի պահել կամ լաւ գտակ
 60 կամ դօտի գլուխն կապել կամ ագնիւ չուխայ
 կամ բարուչ ունել. այլ բօսպալ, չարուխ, եւ
 հին ու մին չուլ ագանին, սակայն ոչ ազատին
 ի ձեռաց նոցա. միայն ի գլուխ-քաղաքսն ու-
 նին սակաւ մի անդորրութիւն եւ հանդստու-
 65 թիւն, որպէս Հալասլ, Ստամպօլ եւ այլ այս-
 պիսիք:

ԴԱԻԻԹ ՊԱՏՐԻԱՐԲ. ՊԱՏՃԱՌԲ ՊԱՐՏՈՒՅ

Թողեալ ի բաց զնեղութիւն տառապանաց
 քրիստոնէից, որոց տեղեակք են տեսողք,
 եկեսցուք դարձեալ յառաջարկեալ բանն մեր,
 70 թէ որպէս ելանէ լոյս օրն ճրագալուցին. եւ
 թէ յայնմ ամենայնի որպիսի փառք եւ մեծու-
 թիւն տեսաք մեք յազգս Հայոց ի սուրբ Երու-
 սաղէմ:

Եւ նախ սկսայց առաջնորդացն թէ ո՞վք
 75 են եւ որպէս. եւ թէ ուստի՞ եղեւ պերճ ազգն
 Հայոց:

Կայր եպիսկոպոս մի Դաւիթ անուն, տե-
 ղացի, սպիտակալի եւ ցանկալի, գեղեցկա-
 տես եւ հինաւուրց. ասին թէ հարիւր ամաց
 80 է, պարթեւազին, քաղցրախօս եւ հեղ եւ ցած,

71 այնմ: — 72 ազգս: — 75 ուստ: